

Թարգմանեց Վ. Դ.

**ԱՌՍՏՐԻԱ.** Արդէն յայտնի է որ բազմազան ազգեր կան այն տէրութեան ներքեւ ինչպէս իտալէզ, Սլաւ, Ալբան, Հունգարացի և այլն : Այս ազգերն իրարու դէմ մրցում մի ունին իւրաքանչիւրն իւր ազգայնութեան առաջնութիւն մի տալու մասին : Բէյթ գումարուած պատգաւորաց նիստին մէջ արման սահմանադրականաց ժողովն, և վերջերս Վիեննայի մէջ եղած գումարումներն լիովին կը յայտնեն իրաց ծանրապէսութիւնն : Այժմ արման տարրն յուղեալ կը մարտնչի կառավարութեան դաշինքին դէմ որուն կընախադասէ թաափ կոմսն, մեղադրելով զանի որ ի ֆլան արման տարրին աւելի նշապատառ որ կը գտնուի Սլաւութեան : Սահմանադրականք, որ իրենք զիրենք ազատական կ'անուանեն, բայց և արման են, իրենց ազգայնութիւնն վտանգի մէջ է, ըսելով, կը գանգատին արդի նախարարութեան դէմ, որ հոգւտանի իրենց նպատաւները :

Արման տարրին պահանջմանց հակառակ կը սնդեն Պոնտիֆիկը որ ազատ մնան իրենց յատուկ լեզուն գործածելու, բնաւ արման ազգեցութեան տակ չլինելով : Միւս կողմէ հունգարական ազգութիւնն ունի մի այնպիսի վիճակ, որ չէ կարելի համալսանութեան մէջ ընկնիլ : Վերջապէս տէրութեան մեծամեծ քաղաքաց ժողովուրդը տեսնելով որ հասարակաց խաղաղութիւնն վրդովուելու վտանգ կայ, Վիեննայի մէջ հանրաժողով գումարելով բոլոր բարձին սահմանադրականաց պահանջմանց դէմ, և խնդրեցին որ տէրութեան հպատակ բոլոր ազգաց մէջ համաձայնութիւն հաստատուի : Սոյն հանրաժողովի փափազն ու առաջարկն թէ և աղնի է և օրինաւոր սակայն այլեայլ արգելիչ պատճառներու համար մեծ տարակոյս կայ իրանայու :

**ԳԵՐՄԱՆԻԱ.** Իսրայէլացւոց դէմ տիրող յուղմունքն հետզհետէ ծանր անկարգութեանց պատճառ կուտայ : Իսրայէլացի երիտասարդութիւնն վտանգի մէջ տեսնելով իւր ապագայն և իւր զարգացումը, տեսնելով որ բրուսիացի պաշտօնականներէ, և կրթութեան վերակայուններէ հրապարակաւ կընախատուին և կը լծնամանուին, նմանօրինակ գործով կը պատասխանեն նոյա :

Իսրայէլացի ուսումնագիտի և արման պաշտօնակայի մը մէջ մենամարտութիւն մի տեղի ունեցաւ, յորում արման պաշտօնակայն վտանգաւորեցաւ : Համարարանի ուսուցիչներէն մին, որ իսրայէլացւոց ժողովութեանց դէմ էր, և արման պաշտօնակայն իրարմարտեցաւ :

Սոյն անկարգութեանց համար հասարակաց զարոյթը կարի գրգռուած է, և մի քանի ազատական թերթեր բոլոր բարձին բնդ դէմայն տնօրէնութեանց որ կրօնամուլ անձանց գրգռմամբ սոյն ատելութիւնն յառաջ բերին ժողովրդեան մէջ ընդդէմ իսրայէլացւոց : Այս մասին կառավարութեան դէմ սատարի հարցապնդում մի կը պատրաստուի խորհրդարանի բացման օրը մատուցելու համար :

**ՍՈՒՅՍԱՆ.** Չինուորական պատրաստութիւններն մեծ եռանդով կը զարուստուին, առաջիկայ Մարտ ամսոյ համար երկու նոր զահաւորներ պատրաստուած պիտի լինին, նաեւ ծովագումար կող ջրհեծաւոր կը շինուին հեղինական նաւաճանգիստներու պաշտպանութեան համար : Հեղինական նաւային զինուորութիւնն յատկապէս ուսումն հրահանգ կ'առնուի Գրիգորի 3 ճարտարագէտ դպրատուններէ մեծ խնդանովաց զործածութիւնը, որովհետեւ համար :

Կ Ո Ս Տ Ա Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս

Շքոտրայէն պատերազմական գործոց նախարարութեան եկած լուրերն բաւական գոհացուցիչ են ի մասին Տէրվիլ բաշայի յանձնուած դժուարին գործոյն յաջողութեան : Տէրվիլ բաշան կարողացեր է Շքոտրայէն Տուլինեօ երթալու ճանապարհին վրայ գտնուող կամուրջն և Մազուրա լեռն ստորոտն գրաւել և յուսալից է որ ընդ փոյթ Մազուրա լեռն ևս պիտի գրաւէ : Տարակոյս չկայ որ Տէրվիլ բաշա յիշեալ լեռնակողմանքն գրաւելով կատարելապէս յաջողած պիտի լինի այս դժուարին գործոյն մէջ : Երկու լեռնային լեռնակողմանքն նաեւ ճանաչել զին Տուլինեօն ևս գրաւելը յոյժ գիւրդին կը լայ, քանզի նոյն տեղութեանքն երբ բանալին կը սեպուի Մազուրա լեռը : Վերջին եկած հեռագիրներն հաստատուցին Մազուրա լեռին Տէրվիլ :

բաշայի ձեռք անցած լինելն :

— Գերմանական դեսպան Հաֆելտ կոմսն կը պատրաստուի Կ. Պոլսէն մեկնիլ, զի իւր Պէրլին երթալու ժամանակն հասած է : Այս առթիւ վսեմա կոմսն ըստ սովորութեան հրաժեշտի ունեցելով ինքն ինքեցի վեհա Սուլթանէն :

— Անգղիոյ ծովային զործոց նախարար Պ. Սմիթ Կ. Պոլիս գտնուած ժամանակն 20 անդղիական լիւր նպաստ տուեր է Հայաստանի սովորց համար : Յիշեալ գումարը կարնոյ ամբերկացի Պ. Բոլ քարոյչին զրկուեր է :

— Տէրվիլ բաշան Տուլինեօ մտնելով հրաւեր զրկեց Անթիպոլիս հրամանատարին որ Պէտրի Պէյին հետ բանակցութեան մտնէ Տուլինեօյի յանձնուելուն պայմանագիրն ստորագրելու : Սոյն գործողութեան մասին կարեւոր հրահանգներն արդէն Տէրվիլ բաշան Դուռէն ստացած է :

— Թէհրանէն եկած վերջին լուրերն կը ծանուցանեն թէ քրդական ապստամբութեան գլուխ Շէյխ Ուպէյտուլլահ Ուսման պաշտպանող պարսկական զօրաց հետ կուռի բռնուելով երկու կողմէն բաղձալիւ սպանութիւնը ըլլալէ զկնի քուրդը յետո մղուեր են : Միւսնոյն միջոցին քուրդը էնհար գիւղը կրակի տուեր, բնակիչներէն 200 մարդ շարդեր և 100 հոգի գերի տարեր են : Պարսկական ընդհանուր հրամանատարին որդին ևս սոյն կուռին մէջ զարնուելով մեռեր է : Վանէն բաւական օսմանեան զօրք ճանապարհ ելած են քրդաց վրայ երթալ :

— Կայսերական հրամանաւ, Չէթինէէի օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար Դաւաֆեան Միհրան էֆէնտին Հոռոմի Օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար անուանեալով Կ. Պոլսէն մեկնեցաւ իւր պաշտօնատեղին երթալու, ուր մինչև Թուրքիոյ Պէյի վերադարձը դեսպանական գործախաւարի պաշտօն պիտի վարէ :

— Նոյնպէս Հոռոմի օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար Միսաք էֆէնտի Բարիզի Օսմանեան դեսպանատան առաջին քարտուղար անուանուած է :

— Նոյնպէս արեւելքին գործոց նախարարութեան օտար լեզուաց դիւանատան անդամ Յարութիւն էֆէնտի Մարգարեան Պէլլրատի Օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար անուանուած է :

ՊՍԱԿ ՀԱՄԱԵՐՈՒԹԵԱՆ

(Տես լրագրոյս 1156 բիւր : Դարուցափոխին եւ վերջ

ԼԱ.

Ս. ՆԱՆՈՒՐԱԳ ՄԱՐԴԱՍԻՐՈՒՄԻՆ, Ե. ՂԻՆԳԱԳՆԱԿԱՆ ԽՐԱՍՏ

Արեւելեան հոգիներն վերայ ծագած այն նորածին յիշեցումն արշալուսէն ալ աւելի գեղեցկօրէն իրեցեալ իշխանութիւն Դարուհի կարօտ աչքին : Եւ մինչ իրար կը մօտէին, անդ Դարուհի ի խորս օրտին իջարեանկան բնազդուէն քաղցր յուզում մ'ըզգաց անդէն : Եւ իր անցեալ երջանկութեան նախկին աւուրց պատկերն համայն Նորոգութեան մըտացը մէջ կը յիշէր զայն սիրով անշէլ : «Աւաղ, կ'ըսէր, նա ինքնովին, եթէ երկինք կամեային զըթալ ինձի ու Վառվառէս, այն իմ դաւակն հրեշտակատես, Պահել մահուան դառն հարուածէն, հիմա կըլլար, սպանով եմ, իշխանուհւոյս պէս հասակով, և հաւասար գուցէ գեղով :» Ուստի անոր վերայ ըզգաց այնչափ ազգու սէր հոգեկցած, որ օրիորդն երբ դուրս ելաւ, խեղճ Դարուհին համագրաւ : (Քանզի մայրն էր իշխանուհւոյն, ու չէր գիտէր գաղտնիքն համբուռն) Քաղաւորին ոտքն ինչպով ըսաւ անոր սիրտ ի վրդով : «Կ'աղաչեմ, Տէր, ներեցէք ինձ, որ ձեզ խօսիմ գորովայից : Այս լուսադեղ իշխանուհին, որ պիտ' ըլլայ Ձեր թագուհին, Արքայաշուք ծիրանեաց մէջ փափկաբնունը գողարկի և սերնճ Սընած մեծցած իսկ ըլլալով, նա չըկրնար ահալ սղով : Առանց իւր կեանքն կորուսելու տանիլ Ձեր խիստ փառաւոր քրտն թէ ես տարի, ան ինձմէ էր : Կի աղքատիկ, որք և անտէր Եւ աննշան ծերոյ զաւակ սովոր էի բազմաթիւ հարկ : Դժուարութեանց խիստ դառնալիստաւոր իշխաւ և անգուցաւ : Բայց անիկա, որ չըտեսաւ իր կենաց մէջ ոչ վիշտ ոչ ցաւ, Ո՛հ մէկ փոքրիկ խտտութենէ կամ ցուրտ խօսքի մը հարուածէ Ա՛հ կըմեռնի, գըթացէք, Տէր, Ձեզ կ'աղաչիմ անձնատէր, Օրիորդին այն գեղանոյճ հեռը վարուիլ մեղմ և անոյճ : Իշխանն անդէն այդք խոժոռ զայս պատասխան տուաւ անոր : «Դուսն միտքըդ ան որ պարտքըդ է ինձառայել որչափ հարկ է :

Խեղճ հովուուհի մի չէ կարող կանգնիլ ինձի ուսուցանող : Մի խառնուրդ դու իմ գործիս իբր յուշարար ինձ արքայիս :» Այս դժպտեան բանից վրան մեծ յարգանք անհանգիստեան խոնարհելով հեղ Դարուհի մեղմիկ անկէ դուրս կըսաւ : ԼԵ.

Բ. Հրապարակախօսութիւն արքայի, Ե. լուծումն հանգուցի վիպիս

Պատրաստութիւնը հարսանեկան կը զըղդէն քաղաքն համայն, Արքունական պալատն արդէն պնդազարդած էր համբէն : Աւագանին և նախարարը համայնքեւտեալ անդ կարգ ի կարգ Հրաւիրանաւ եկան բոլոր առ թագաւորն մեծազօր : Որ մեծ պատուով զանոնք խմբեց խիստ փառաւոր սրահի մը մէջ : Անդ բազմեցաւ և վեհ արքայն ականակուռ գահին վրան : Բայց հարսանեաց ականապարար դեռ չըլաւած ջահն ու զամբար : Ատենախօս եղաւ ինքնին, լուծեց հանգոյց սոյն այս վիպին : «Բայ ի Յոյսէն, ըսաւ արքայն, ախարհիս մէջ չըկայ մի բան, որ առաւել ըլլայ պատրող քան երեւոյթ արտաքին քոյ : Այս ըսածիս տեսնէք պիտի այժմ՝ պայծառ օրինակ մի : Ո՛վ չըկարծէր արդեօք թէ իմ այս հարսնացու իշխանուհին Ձեհամարի զինք երջանիկ, սիրան ալ չիցէ դուսն կեղծիկ : Սակայն իրօք չէ այդ պիտի, քանզի նա չէ գուհի սրտի : Ո՛վ չըկարծէր թէ այս կարիճ մեր տէրութեան բարձրացուցիչ Մեծ նախարարն Ռափայէլ այն հարսանիքն հաճ է տեսնել : Սակայն որտէն նա կըցանկոյն որ սոյն հարսանիքն յետքս մընայ : Ո՛վ չըկարծէր միանգամայն թէ Դարուհի արգար ցասման բուռն կրիւք չուրք : Եղբար և լուսահատ չիցէ թշուառ : Սակայն իրօք նա է գըւարթ : Եղբար զրկանք : փորձ տարապարտ Ձեղան կարող չարիքի խապառ համբերութեանն անհաւատար : Ո՛վ չըկարծէր հուսկ վերջապէս տեսնելով սոյն հարսին պէս պէս Հրապարակեալ ու գեղ, թէ իմ վիճակ յոյժ երջանիկ է և միակ : Սակայն իրօք չէ այդ պիտի, քանզի երբ սուրբ Պրտակի Անլոյճ կապով հաւատարիմ այս հարսին հետ ես չարիկապալում, Դառն և անհղ պիտ' ըզգամ ցաւ, և աշխարհի առջև բընաւ վատ և դժբաղդ : Եսն զայն արքայս պիտի ըլլամ միշտ յապագայս :

—Նշանակալի կայսերական կառավարող տեսուչ Գրիգոր Էփենտին երկրորդ կարգի պաշտօնատարութեան աստիճան տրուած է :

—Պաշտօնական իշխանութիւնն իր երկրորդ աստիճանի վրայ Գրիգոր Էփենտին Երկրորդ կարգի պաշտօնատարութեան աստիճան տրուած է :

—Ի. Պոլսոյ Առաջնորդի գլխի յայն քննիչներէն Պ. Միխայէլ Սթաւրոս անուն պատուաւոր անձը, նոյն գլխի յունական եկեղեցւոյ վրայ ունեցած 900 լիւրայի պահանջը մուրհակը Յունաց Ս. Պատրիարքի իրեն ըրած այցելութեան ատեն յանձնելու է ըրոր գումարը բաշխելով հեռակեալ կարգադրութեամբ, նոյն գլխի յունաց Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյն 200 լիւրայ, նոյն գլխի յունաց դպրոցներուն 200 լիւրայ, յունաց ազգային հիւանդանոցին 200 լիւրայ, նոյն հիւանդանոցին մէջի պաշտօնէից 100 լիւրայ, իսկ մնացորդ 200 լիւրայի անորէնութիւնն Ս. Պատրիարքին տրամադրութեան յանձնելու է :

—Յայտնի է որ Գեր. Հասունեան Հռոմ գնացած է կարգադրութեան աստիճան ընդունելու համար : Սակայն խտրական լրագիր մի գիտողութիւն կը յայտնէ թէ Գեր. Հասունեան կարգադրութիւն ստանալու խնդիրը կնճռոտելու է գիտարութեանց հանդիպելու է :

—Տէրութեանց դեսպաններն այս վերջերս երկրորդ անգամ նիստ գումարելով Տուրքիոյ ինդիւսթրիալ դարձել են : Նիստը տեղի ունեցելու Գերմանական դեսպանատունը :

—Կայսերական լինդանթարանին մէջ Հալլայի անուն նոր ռումբ մի հնարուել է, որուն ոյժը շատ սաստիկ է եղեր : Այս նորահնար ռումբի փորձը պիտի լինի Չաթալայի :

—Ի. Պոլսոյ գանուած պատուաւոր անգլիացիներէն Պ. Յոսթըրի փեսայ սըր Ժորժ Թոմաս իւր նորատի տիկնաւն հանդերձ Հոգարթ բաշայի տունն ըրած այցելութենէ դիւրով վերադառնալու ժամանակ, մի քանի չարագործ տիկնոջ գետակին վրայ կը յարձակին, ապակիներն կը կոտորեն որ տիկնոջ գոհարեցնեն իւր զոյտեն : Սըր Ժորժ Թոմաս, և գետակը տանող անձինք, և թաղին պահուողն գիմարելով տաք կռուի մը կը բռնուին : բարեբաղդաբար առևտրական Բիլլերի սպասաւորներն ևս

վրայ հասնելով չարագործներն կըցրուին : Սըր Ժորժ Թոմաս ձեռքի գաւազանով չարագործները ուժգին հարուածել է, լայց և ինքն ձեռքէն վիրաւորուել է :

—Խասգիւղի Որբանոցին տնօրէն Սըրուհի մայրապետն իւր ինամայ յանձնուած որբերն առնելով կայսերական պալատը դիմել վեհա. Սուլթանին աղերսագիր մատուցել է խնդրելով որ յաւերժայիշատակ Սուլթան Ապտալա—Ալի իւր կայսրէն յիշեալ որբանոցին շնորհուած մահ և հացի հանապազօրեայ պարէնն, որ ժամանակէ մը ի վեր դադարած էր վերստին շնորհուի : Վեհ. Սուլթանն բարեհաճելու և հրաման տուել է որ յիշեալ շնորհը դարձեալ շարունակուի :

—Ալպանական Միւլլիսը վերջին անգամ Տէպրէի մէջ գումարած հանրաժողովով պատրաստուած աղերսագիրը Բ. Դրան ներկայացնելու նպատակաւ իւսթիւլի ժողովրդեան գլխաւորներէն չորս անձինք ընտրել, որք Ալպանական Միւլլիսէ կողմէ պատգամաւոր պաշտօնով յիշեալ աղերսագիրն Բ. Դրան մատուցանելու համար Ի. Պոլսոյ հասան :

—Հանրաժողով լինութեանց պաշտօնատունն բոլոր գաւառական կառավարութեանց շրջաբերական մի յաղարկած է, որով հրահանգ կը արձակուի թէ ինչ կերպիւ պետք է փոխարինութիւն պահանջել երկրորդեաց ընկերութիւններէն երբ անհատներու վնաս կը պատահի երկրորդեաց վրայ :

—Յունաց Ս. Պատրիարքն յատուկ խնդրագիր մատուցանելով կայսերական կառավարութեան խնդրած է որ յունաց հիւանդանոցին և ուրիշ բարեգործական հաստատութեանց համար վաղուց սահմանեալ մահ և հացի օրական պարէններն, որ ժամանակէ մը ի վեր դադարած են, վերստին շարունակուի շնորհուի : Նորին Սրբազնութիւնն պատասխան ընդունելու է Առաջին նախարար բարձրա. Սայիտ բաշայէն թէ յիշեալ պարէններու շնորհումը վերահաստատուելու համար պարտուպատշաճ անօրէնութիւնն պիտի լինի ընդօրոյթ :

—Իրհաւատեն թէ անգլիական դեսպան Պ. Կոչըն 2 կամ 3 շաբաթէն պիտի մեկնի Ի. Պոլսէն Լոնտոն երթալու համար :

## ԱԶԳԱՅԻՆ

Չմիւ յիւր Գաւառական Ժողովն ամսոյս 11/ին իւր 34- նիստը ըրաւ յազգային Առաջնորդական ընդ նախագահութեամբ վիճակիս Առաջնորդ Գեր. Տ. Մեքիսեղեկ Ս. Արքեպիսկոպոսի և Ատենայեալութեամբ Պ. Գրիգորի Չիլինկերեան : Ատենայեալութեան ժամը 4 1/2ին և վաղեցաւ 6 1/2ին : Օրակարգի խնդիրներն էին Ա. Թեմական երեսփոխանաց վաւերացումը Բ. զինուորական տար. ինդիւս. Գ. Սիւրիւճեան կառուած ազգային տնակի մը խնդիրն : Գ. ազգային ընդհանուր երմոցոյցի հաւասարակշիւութեան խնդիրն : Ե. պատուարժան երեսփոխանի մը կողմէ անցած տարի թոստացուած ազգային արուեստանոցի մը խնդիրն :

Սոյն խնդիրներէն առաջինն այն է Թեմական երեսփոխանաց ընտրական տեղեկութիւններն, որոյ մասին ազգային վարչութիւնն յատուկ գիր ուղղած էր, օրինաւոր գտնելով ժողովն վաւերացոյց, և հեռակեալ Մեծ. անձինք Թեմական երեսփոխան ընտրուեցան, որք են

Պ. Թադեւոր Սըվազլեան Դասապայի և Մանիսայի վերի գիւղի միացեալ Թեմերէն ընտրեալ, Պ. Սարգիս Մարութեան Գրգաղաճի և Աքհիսարի միացեալ Թեմերէն ընտրեալ, Պ. Սարգիս Պապիլէր Մէնէմէնի, Պերդամայի և Դընքի միացեալ Թեմերէն ընտրեալ, Պ. Յովհաննէս Աւետիքեան Տէնիլիի և Նազիլի միացեալ Թեմերէն ընտրեալ, Պ. Գեորգ Սուլթանեան Այտընի, Սէօքէի և Գուշափայի միացեալ Թեմերէն ընտրեալ, Պ. Սարգիս Անդրէասեան Էօտէմիշի և Պալմարի միացեալ Թեմերէն ընտրեալ :

Օրակարգի Զրորդ խնդիրն այն է Զինուորական արոց. մնացորդի և 1296 թուականի տուրքի հաւաքման մասին երկար խորհրդակցութիւնք տեղի ունենալէ զինի, որոշուեցաւ զինուորական արոց մնացորդ պարտք ունեցող անձանց նամակի ձեռով յատուկ յայտագիր ուղղել, և նոյն վերջնական յայտագրով իմացնել իւրաքանչիւրոյն թէ մինչև առաջիկայ Գեկտեմբեր 31 փութան իրենց պարտքը Ազգ. վարչութեան ձեռքը վճարել : քանզի յիշեալ պայմանաթամբ լրանալէ զինի Ազգ. վարչութիւնն պիտի պարտաւորի չվճարող անձանց անուանց ցուցակը

Դժուարիմաց ձեռք կ'երեւի այս առեղծուած դարմանալի, Սակայն երկու բառով այժմիկ պիտի լուծուի ամեն գողտիւք : Եւ այս երկու բառերն օրհնեալ պիտի ջնջեն իսպառ ծածկիտը Դժբաղդութեանց գումարն ամեն զոր լըսելիք հիմա ինձմէն : Գիտցէք ամենքդ, յորեք արքայն, զի այս չընաղ հարսն աննման, Չոր կը կարծէք ինձ սահմանեալ, օտ իմ աղիկիս է գեղափայլ, Եւ այս դաւակ իմ հարազատ կուտամ այսօր հայս բարեբաղդ : Այս քաջապաշտ նախարարին իմ սիրելի Ռափայէլին, Որ իրարու մշտանքէր սիրով կապուած են ի մի սէր : Գիտցէք նաև զի ետ բնաւին յաղթահարուած Դարուհիին Անմեղ և սուրբ մեծ ձիրքերէն, տարապարտուց, (ահա կ'ըսեմ,) իմ պալատէս հանած էի, արդ սիրալիր գգացմամբ սրտի կ'առնեմ կրկին ինձ Թագուհի, որ աննման է յիւր սեռի : Որպէսզի այս օրէ ետև պաշտեմ իրեն երկնից պարգև, Գոխան այնչափ իմ խտուածեանց որ տարապարտ առ իմ նախանձ Տեղացուցի անոր վրայ, որ հըլութեամբ իւր գերակայ Յաղթահարեց փորձերս համայն, սիրտի սիրեմ զինքն յաւիտեան : Եւ ջերմալեւմ սիրոյ բոլոր փափկութիւնով ամեն անոր Բաղձանքներուն միշտ ուշադիր ծառայելու եմ անձանձիր : Թէ և անոր անպարտ վշտաց, որոց յաղթեց արիապանձ, Բիշտակի վէպն անմուաց խօսուելու է յազգքս յազգաց, Բայց ես կուգեմ որ աւելի ամեն աշխարհ փառաւորուի Անոր վրսեմ փառացն անուն որով իր մեծ համբերութիւնն կը պըսակեմ շըքեղ և պերճ սիրագումար ատենիս մէջ :

ԸԳ.

Համբերութեան պատկը

Պատկաւելի այն ատենին բազմականաց տըխուր աչքին Մէջ յանկարծուստ տիրեց նըշան գորովաշարժ ուրախութեան, Ամենեցուն միտքն հիացած ընթանցի ընդ այս դարձուած, Ըղբարուհի կը գովէին, և երջանիկ կ'անուանէին Ըղբափայլէ և վառվառէ, որոց ոգւոյն անհընար է Նըկարարեալ զգացմունքն անոյշ : քանզի մինչդեռ էին անոյս Ալ իրարու հետ միանալ տեսան այնտեղ անակնկալ իրենց անմեղ սիրոյն փափաք ի դուրս ելեալ գերփառունակ :

Իսկ վառվառէ Թագաւորին դաւակն ըլլալն իմցած կէտին, Հօրը գրկաց մէջ կընետուի, ու կը գրկէ և կը փարի : Խանդաղատեալ հայրը անդէն ծընելասէր իր վառվառէն Համբերելով առաքինի Դարուհիին զայն կըտանի, Որ և ուժգին խնդութենէն խելքն էր կարծես գացած գլխէն, Ան որ երբեքն բռնուըն ցաւոց և արտասուածք մէջ ալեկոծ, Հաստատամիտ տոկաց ցըվեր շնորհով կալով վեհ սրտին մէջ, Այժմիկ որպէս քաջ փորձաւոր աշխարհային շրջումներու Անակնկալ ուրախութեանս կըցաւ տանիլ հազիւ և հազ : Խիստ դժուարաւ կըսեղմէր նա իր գողգողուն սրտին վըրայ Հոգւոյն հատոր իր վառվառէն զորն որ երկնիք այսօր նորէն Պարգևեցին իրեն սիրտանք : Ինքն յարտասուս էր բովանդակ : «Ալ հերիք է, ըսաւ իսկոյն, վեհ Թագաւորն իր համարին Եւ հարազատ ջերմ սիրելեաց, ուրիշ անգամ գացէք միմեանց վայելեցէք սէրը ցըլաղ, հարսնիք ունինք ընել հիմակ : Արքայադու ձեր պատմութեան առէք վրանիդ կրկին անգամ Դուք պաշտելի մեր Թագուհի, զարդարուեցէք ըստ պատշաճի :

ԸԴ.

Վերջին դէպք

Ամենեքին միահամուռ կ'ողբերին Թագաւորին դուռ, Անդ Ռափայէլ և վառվառէ ըղձիւք կ'ուխտեն ի սուրբ սրտէ, Յրկեանս ինեւ հաւատարիմ, ըստ Պըսակի սուրբ խորհուրդին : Այնուհետև պալատին մէջ խնդրք, կոշուք հանդիսապէրճ Պար և նըւաղ, կայթ և կաքաւ կը գեղանին հաճոյք անբաւ : Ամենուն աչք ի Դարուհին գողգոս անյաղ կընայէին : Անոր կըրած դիւցազնական համբերութիւնն ամենեքեան Հաղարտոր ներդրեցելով և երկնաշատի հոգաւորութիւնը կը գովէին իրեն պարծանք կանանց սեռին, և օրինակ : Իսկ ինչանին վըրայ այնքան հաստատ էր սէր ժողովրդեան, Մինչ զի անոր խիստ փորձերուն կ'ընծայէին մեծ գովութիւն : Չի անոնցմով եկն յերեան կանանց սեռին պատշաճական Եւ ամեն տեղ խիստ հազուադէպ այնչափ ընտիր և անստղծաւ Համբերութեան օրինակ մի, որ անպատճառ կը պըսակուի :

Ա. Ե. Ս. Պ.

կառավարութեան յանձնել ինչպէս որ վերջին անգամ եկած հրամանագիրն ստիպողաբար կը պահանջէ զայն : Իսկ 1294 թուականի տրոց հաւաքումը դարձեալ Ազգ. վարչութեան ձեռք գործադրուելու որոշում տրուեցաւ ըստ վաղեմի սովորութեան :

Օրակարգի երրորդ խնդիր լինէ՞ Սիւրիւս ճեան անուանեալ ազգային տնակին համար ևս որոշուեցաւ , որ կըլէ յորդորմամբ բարոք կարգադրութիւն մի չգոյանայ , կանոնաւոր կերպիւ ի դատ ձեռնարկուի , և օրինաց միջոցաւ խնդիրն վճռուի և վերջանայ :

Ժամն անցած լինելով Օրակարգի մնացորդ խնդիրներն յաջորդ նիստին մնաց որ 15 օրէն գումարուելու որոշմամբ ատենանք վերցաւ :

— Ինչպէս մեր նախընթաց թերթով ծանուցած էինք , Սպարթաքեան վեմաշուք Յովհաննէս Էֆէնտին Զմիւռնիոյ Հայոց ազգային արկղի վիճակին անձկութիւնն մեր Գեր. Ս. Առաջնորդի կողմէ իմացած լինելով բարեհաճած էր 500 օսանկան լիրայ մշտնջենաւոր նուէր չնորհել 0,08 տարեկան տոկոսով : Այս անգամ ևս գումարին տարեկան տոկոս 40 լիրային մատակարարութեան մասին Սպարթաքեան վեմաշուք Յովհաննէս Էֆէնտին իւր կամաց յայտագիրն Ազգ. վարչութեան յանձնած է , որ հետեւեալ կերպիւ անխափան ամեն տարի պիտի չգործադրուի . այսինքն Զմիւռնիոյ Հայոց ազգային արկղն պարտաւոր է ամեն տարի 14 1/2 լիրայ վճարել Կ. Պոլսոյ Հայոց Ս. Փրկչեան ազգային Հիւանդանոցին , նոյնպէս 5 1/2 լիրայ ամեն տարի վճարել Կ. Պոլսոյ Հայոց Միացեալ ընկերութեան քանի որ սոյն ընկերութիւնն կանգուն կըմնայ , իսկ մնացեալ 20 լիրային տնօրէնութիւնն , և Աստուած մի արասցէ՛ եթէ Միացեալ ընկերութիւնն լուծուի , 5 1/2 լիրան ևս բարդելով գոյացած ամբողջ գումարին տնօրէնութիւնն Սպարթաքեան վեմա. Յովհաննէս Էֆէնտին կամ նորա մերձակոր ժառանգներէ երիցագունին կամքէն կախեալ պիտի լինի , ըստ յանձնարարութեանն գործադրուելու համար :

Սոյն մշտնջենաւոր խտակն ունի նաև ուրիշ ներքին տրամադրութիւններ , որք Ազգային վարչութեան Դիւանին պատկանեալ լինելով վաւերացուած և պաշտօնական արձանագրութեանց մէջ հաստատուած են :

— Ազգային Տնտեսական խորհուրդն քաղաքիս սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ լուսարարապետ ընտրեց արժաւ տէր Յովհաննէս քահանայն Միւնասեան , և Ազգ. վարչութեան ներկայացոյց իւր ընտրութիւնը : Ազգ. վարչութիւնն ևս յոյժ օրինաւոր գտնելով զայն վաւերացոյց , և Ս. Նախագահն Պահպանիչ ասելով հաստատեց ըզ յիշեալ Արժ. քահանայն ի պաշտօն լուսարարապետութեան սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյ : Քաղաք է մեզ տեսնել զի Արժ. տէր Յովհաննէս Միւնասեան քահանայն խոհական վարմունքն և անձնուէր գործունէութիւնը լաւ կըքնահատուին : Կար և զօրութիւն կըմաղթեմք նմա իւր փափուկ պաշտօնին մէջ :

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՅԾԵԼՈՒԹԻՒՆ Ի ԶՄԻՒՆԻՒՄ

Զմիւռնիոյ տարեգրութեանց մէջ ամսոյս 19-րդ յիշատակաց արժանի թուական մի կըհանգիստանայ չնորհիւ սիրալիր այցելութեան մի հայ բնաստէր և բազմաշխատ կաթողիկոսի :

Տանն Կիլիկիոյ երանաշնորհ Տ. Տ. Մկրտիչ Ս. Կաթողիկոսն ամսոյս 19-ին չորեքշաբթի օրն գաղղիական շրջենաւով ժամանեց ի քաղաք , և արժանավայել յորդանք ընդունուեցաւ մեր Գեր. Ս. Առաջնորդէն և եկեղեցական գոսէն : Երանաշնորհ Ս. Կաթողիկոսն շրջենաւէն երկու շաբթի անմիջապէս յատուկ կառքով ուղղուեցաւ յԱզգային Առաջնորդարան , ուր վաղը ինչ հանգչելէ և մինչ ցիւս օր բաւական այցելուներ ընդունելէ զինի յետ կիսաւուր մեր Գեր. Ս. Առաջնորդին և Սպարթաքեան վեմաշուք Յովհաննէս Էֆէնտին հետ այցելութիւն քրաւ աղղային հոյակապ հիւանդանոցին , որոյ պայծառութեան և բարեկարգութեան վրայ իւր գոհունակութիւնն յայտնելով օրհնեց զայն կառուցանող բարերարներն :

Նոյն օրն երեկոյին հրաւիրուեցաւ ընդ Գեր. Ս. Առաջնորդին ի հացկերոյթ յապարանս Սպարթաքեան վեմաշուք Յակոբ և Յովհաննէս պաշտապետ , ուր սրբազան Հիւրն Ազգիս վերջին փառաց անկեալ օթարանին՝ Կիլիկիոյ նորանոր անցից պատմութիւններով գրեթէ համայն գերդաստանին սիրտը շարժեց , և սրտադին բարեմաղթութիւններ ըրաւ :

Հետեւեալ օրն մեր Գեր. Ս. Առաջնորդին հետ Ս. Մեսրոպեան և Ս. Հովսիփոսեանց ազգ. վարժարաններն այցելեց , որոց յառաջագէտ և բարեկարգ ընթացից վրայ իւր բարձր գոհու. նախութեան յայտարար քաջալերական բանիւք իւր օրհնութիւնն մատաղ սերնդեան վրայ սքսեալէ զատ , նաև այցելուաց տուժարին մէջ իւր գոհունակութիւնն արձանագրեց դպրոցաց յառաջագիւծութեան և պաշտօնէից աշխատասիրութեան համար :

Երէկ ուրաւթ ամսոյս 21-ին մեկնեցաւ քաղաքէս ի Կ. Պոլիս , նպատակ ունելով վերջնական կերպիւ կարգադրել Կիլիկիոյ կաթողիկոսութե գործերն Ամենա. Ս. Պատրիարքի և Կեդրոնական վարչութեան ժողովոյ հետ խորհելով և ուրոշելով ամեն պայման ու սահման ինչ որ կըվերաբերի նոյն կաթողիկոսական Աթոռոյն :

Նորին բարձր Սրբազնութեան նպատակներն իսկապէս մեծ և աղբօգուտ լինելով , կըբարեմաղթեմք նմա յաջողութիւն յառաջագրեալ գործն յօգուտ Կիլիկիոյ մեր բազմակարօտ ազգայնոց ի պարծանս համօրէն Ազգիս :

Կարեւոր կըհամարեմք նաև Ամենա. Ս. Պատրիարք Հօր և Կեդրոնական վարչութեան խորին ուշադրութիւնը հրաւիրել Կիլիկիոյ վիճակին վրայ . որ ըստ ամենայնի մեծ պէտք ունի Ազգ. ընդհանուր հսկողութեան : Յուսալից կ'սպասեմք նաև որ Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին այս անգամ Կ. Պոլիս ուղևորութիւնն իրաւան արդեամբ կըպսակուի :

— Պատրիարքական փոխանորդ Տ. Պողոս Խելտամեան վարդապետն իր պաշտօնէ առժամանակահատից հրաժարելով Կաթողիկոսի Ս. Էջմիածին եպիսկոպոսութեան աստիճան ընդունելու : Մինչև նորին վերադարձը՝ փոխանորդութեան պաշտօն պիտի վարէ Ազգիւնուպոլսոյ նախորդ Առաջնորդ Բուսնուգեան Գեորգ վարդապետն :

ՏԵՊԼԱՆԱՆ ԽԱՐԻՔ

Նահանգիս ընդհանուր կառավարիչ բարձրա. Միւնասթ բաշան , որ շաբաթէ մը ի վեր Գուշատայ կըգտնուէր և անկէ Զէյթն անցնելով տեղւոյն հանրօգուտ շինութեանց կարեւոր տնօրէնութիւններ ընելէ զինի երէկ չէ առջի օր իրիկուն ժամը 9-ին քաղաքս վերադարձաւ :

— Նորին արքայական Բարձրութիւն Օսքար իշխանն , Կոթլանտի գուշա , որ Շուէտի և Նորվեգիոյ վեհա. թագաւորին երկրորդ որդին է , անցեալ շաբաթ առաւ ժամանեց ի քաղաքս Վանաթի շրջենաւով : Պարզ ուղևորութիւն կ'ընէ յիշեալ երկտասարդ իշխանն :

— Բարիկի Օսմանեան նորքնտիր գետալան վե. Խատ բաշա անցեալ շաբթու Զմիւռնիայէն անցնելով ուղևորեցաւ իւր պաշտօնատեղին :

— Նոյնպէս անցեալ եօթնեկին մէջ Կ. Պոլսէն քաղաքս ժամանեց վեմ. Հիլմի բաշա , և քաղաքիս զինուորութեան հրամանատարին կողմէ արժանավայել կերպերով ընդ ունուեցաւ վե. Հիլմի բաշա պիտի հսկէ ընթացիկ քաղաքէս մեկնելու կանոնաւորութեանց վրայ :

— Գաւառիս շրջականներէն ամեն շաբաթ լեւաթ զօրքեր դալով քաղաքիս մեծ զօրանոցը կը մտնեն . ասկէ Կ. Պոլիս կամ ուրիշ կողմեր երթալու համար :

— Շէյխաբաշա իսլամութեան կողմէ գաւառիս զրկուած շրջաբերական մի կըծանուցանէ թէ վերջին Սեպտ. ամսէն սկսեալ չերի պաշտօնէից ամսաթիւ ոչականներէն 0/0 2 վար պիտի դուրս , որոյ դուժմարներով յատուկ դրամագրուի պիտի կալմուի , որ դադարեալ վաստակաւոր պաշտօնէից թաշակ լինելու համար պիտի գործածուի :

— Գերմանական կառավարութիւնն հետեւեալ նշանաբաշխութիւնքն ըրած է :

Նահանգիս նախորդ կառավարիչ վե. Համաթի բաշային՝ Պսակի կարգին առաջին աստիճանի շքանշանը :

Նահանգիս արտաքին գործոց պաշտօնատան թղթակցութեան տեսուչ մեծաշուք թաղթագեան Տիրան Էֆէնտին՝ Պսակի կարգին երկրորդ աստիճանի շքանշանը :

Քաղաքիս Օսմանեան Գրամանոցի տեսուչ Պ. Հայնցին՝ Պսակի կարգի 3-րդ աստիճանի շքանշանը :

— Քաղաքիս հաճի Սօթիքա փողոց տան մի բնակիչ երկու կանայք 100 օսմանեան լիրայէ , ոսկի ապարանջանէ և ժամացոյցէ բաղկացեալ դրեթէ 150 լիրայի դոյքերնին գողերէ զգուշանալու համար ի պահեստի դրած էին իրենց տան ստորերկրեայ մասանին մէջ ածխոյ կոյտի մը ներքեւ : Յիշեալ տիկնայք անցեալ կիրակի առաւ եկեղեցի կ'երթան , և վերադառնալով իւրենց տան դուռը բաց կըգտնեն խղճալիներն զարհուրած ներս մտնելով կըտեսնեն որ տան վերաբերեալ ամեն բան իւր անդին է . սակայն իրենց թագու. դանձր անհետացեր էր : Տակաւ ինչ իրենք , ոչ դրացիք և ոչ ստիկանու. թիւն չկարացին իմանալ թէ զայն գողցող չաբաղորդք ունից տեղեկացած էին յիշեալ գանձին գողութիւնն և ուր պահուած լինելը :

— Ս. Էջմիածնի վեհափառ Կաթողիկոսն Տ. Տ. Գեորգ Գ. և Հռոմի Ս. Պապն Լեոն ԺԴ. որ հիւանդացած էին , այս վերջերս իրենց առողջութիւնն կրկին ստացած են :

— Իրհաւաստեն թէ՛ Անգղիոյ երկրագործա. կան նախարարութիւնն ծրագիր մի ներկայացուցեր է կառավարութեան , դիւրացուցիչ իրաւունիոյ աղքատ ընտանիքներու դաղթականութեան դէպ ի գանատայ :

— Ակրամ քաղաքը սաստիկ երկրաշարժէ մը խիստ մեծ վնասներ կրած , և ժողովրդեան մեծ մասը ցրուած է : Մնացեալ աղքատաց համար կոյսերական չնորհք , և մարդասիրական հանգանակութիւններ կըհասնին յօգնութիւն :

Ռուսի ամերիկոյի մէջ ես Հոկտ. 28-ին տա. տիկ շարժեր տեղի ունեցեր են :

— Ամերիկայի Միացեալ—Նահանգներէն և Ռուսիոյ հիւսիսային կողմերէն եկած լուրերն կըծանուցանեն թէ սոսկալի և յանկարծական սառուցումներ տեղի ունեցեր են :

— Պողոթիւնը և շարագործութիւնը դիշեր և ցիւրէկ անգագար պակաս չեն : Տիկնայք ևս սկսան ցերէկ ատեն փողոցներու մէջ կողուպտու. իլ աւաղակներէ : Եթէ ոստիկանութեան կողմանէ աղղու միջոցներ կըպակին այս օրինակ շարագործութեանց առաջին առնելու համար , դոնէ տիկնայք պէտք են առ հարկի զգուշանալ ծանրագին զարգերով դուրս ելնելու , որպէսզի կողոպտուած տուն չգառնան :

— Երէկ Աստիլական շրջենաւով քաղաքս վերադարձան մեծա. հայրենակիցք մեր Գեորգ Էֆէնտի Էլմաստան և նորին եղբօրորդի Ստեփան Էֆէնտի Գրի. Էլմաստան յուրախութիւն իրենց ազգականաց և բարեկամաց , Էլմաստան Գեորգ Էֆէնտի տարիուկէս է որ Եւրոպայ և վերջերս վիւննա հաստատած է իւր փառաւ. տունն , իսկ Ստեփան Էֆէնտի Գրի. Էլմաստան իւր ընդունակութեան շնորհքն զատ Եւրոպայի նուագախումբերու մէջ աւա. հանգիսացած է ի գաշնակածութեան :

ԱՌՆԻՏՐԱԿԱՆ

ԱՅԻՕՆ : Նշանաւոր գործողութիւն մի տեղի չունեցաւ : Գիներն միևնոյն կացութեան մէջ կըգտնուին :

ԲԱՄՊԱԿ : Եթենեկիս մէջ վաճառեցան 250 հակ մեքենայաւոր ի գին 380—390 զրուչի կենդինարն ըստ տեսակին :

ԲԱԼԱՄՈՒՏ : Ի հանդարտութեան գտանի : Միայն 2600 կենդինար վաճառմունք եղին ի գին 108—120 զրուչի կենդինարը :

Տէր Լազարոյ ,

Պապ Գ. Պապ Գրամանոցի :